Հաստատում եմ՝

Դպրոցի տնօրեն՝ Գ.Այվազյան

Արմավիրի N 9 հիմնական դպրոցի

դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչի տարեկան աշխատանքային

# Պ Լ Ա Ն

2023 – 2024 ուստարի

Աբրահամյան Կարինե

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | Ժամկետ | Կատարող |
| --- | --- | --- | --- |
| 1. | Մշտապես ուշադրության կենտրոնում պահել աշակերտների հիգենան և դասարանների մաքրությունը, | Ուստարվա ընթացքում | ԴԱԿ, Բուժքույր |
| 2. | Հետևել սովորողների կողմից դպրոցի կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջների կատարմանը: | Ուստարվա ընթացքում | ԴԱԿ |
| 3. | Կատարել միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ երեխաների հաշվառում, նրանց նյութական կամ հոգեբանական աջակցություն ցուցաբերելու համար: | Սեպտեմբեր | ԴԱԿ |
| 4. | Սահմանել վերահսկողություն պարբերաբար ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ, ձեռնարկել միջոցներ դրանք ժամանակին կանխելու համար: | Ուստարվա ընթացքում | ԴԱԿ, Դասղեկներ |
| 5. | Աշխատանքներ տանել աշակերտների կարգապահության, հաճախումների և ուսումնական առաջընթացի բարելավման ուղղությամբ: | Ուստարվա ընթացքում | ԴԱԿ, Դասղեկներ |
| 6. | Կազմակերպել սովորողների դաստիարակչական, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքները: | Ուստարվա ընթացքում | ԴԱԿ, Դասղեկներ |
| 7. | Տարեկան առնվազն երկու անգամ հրավիրել աշակերտական ընդհանուր ժողով դպրոցի տնօրինության մասնակցությամբ: | Ուստարվա ընթացքում | Տնօրինություն, ԴԱԿ |
| 8. | 6-9 –րդ դասարաններում հրավիրել ժողովներ, անցկացնել դասարանական աշակերտական խորհուրդների ընտրություններ: | սեպտեմբեր 2023 թ. | ԴԱԿ, Դասղեկներ |
| 9. | Դպրոցում ստեղծել ընտրական հանձնախումբ աշակերտական խորհրդի նախագահի ընտրությունն անցկացնելու համար: | Սեպտեմբեր | ԴԱԿ |
| 10. | Անցկացնել աշակերտական խորհրդի ընտրություններ, ընտրել աշակերտական խորհրդի նախագահ: | Սեպտեմբեր | ԴԱԿ, Դասղեկներ |
| 11. | Դպրոցը կահավորել անհրաժեշտ պատի թերթերով, Փառքի անկյունով, հոբելյանական և տոնական օրերին նվիրված վահանակներով: | Ուստարվա ընթացքում | ԴԱԿ, Դասղեկներ |
| 12. | Դասարանական աշակերտական | Ուստարվա | ԴԱԿ |

| | | | |
|---|---|---|---|
| | խորհուրդներից յուրաքանչյուր ամիս պահանջել հաշվետվություն դասարանի աշակերտների առաջադիմության և վարքի մասին: | ընթացքում | |
| 13. | Դպրոցի աշակերտական խորհրդում ստեղծել հանձնախմբեր՝ աշակերտների ուսումնադաստիարակչական աշխատանքները լավագույն ձևով կազմակերպելու համար: | Սեպտեմբեր | ԴԱԿ, Դասղեկներ |
| 14. | Աշակերտներին ծանոթացնել դպրոցի ներքին կարգապահական կանոնների հետ: | Հոկտեմբեր | ԴԱԿ, Դասղեկներ, ԱԽ և հանձնախմբեր |
| 15. | Կազմակերպել միջոցառումը նվիրված Արցախի ինքնապաշտպանական , 2016 թ. քառօրյա, 2020թ. 44-օրյա և 2022թ սեպտեմբերի 13-15-ի մարտերի մասնակիցներին: | Հոկտեմբեր | ԴԱԿ, Զինղեկ, Դասղեկներ, Պատմության ուսուցիչներ |
| 16. | Կազմակերպել՝<br>1) գիտաժողովներ, սեմինարներ, մեծարման երեկոներ, դասամիջոցառումներ, ինտելեկտուալ խաղ-մրցույթներ,<br>2) լույս ընծայել պատի թերթեր, պաստառներ, վահանակներ, ստեղծել տեսագրություններ, ալբոմներ, մեթոդական անկյուններ: | Ուստարվա ընթացքում | ԴԱԿ, Դասղեկներ |
| 17. | Աշխատանքներ տանել 5-9-րդ դասարանների դժվար դաստիարակվող երեխաների հետ՝ համագործակցելով նրանց ծնողների հետ: | Ուստարվա ընթացքում | ԴԱԿ, Դասղեկներ |
| 18. | Հետևողական աշխատանքներ տանել աշակերտների գեղագիտական դաստիարակության ուղղությամբ, կազմակերպել մշակութային միջոցառումներ, էքսկուրսիաներ: | Ուստարվա ընթացքում | ԴԱԿ, Դասղեկներ |
| 19. | Սովորողների օգնությամբ ձևավորել դպրոցի միջանցքներն ու դասասենյակները: Աջակցել միջոցառումների կազմակերպմանը: | Ուստարվա ընթացքում | ԴԱԿ, Դասղեկներ |
| 20. | Աշակերտների մոտ ձևավորել Հայաստանի Հանրապետության պետական դրոշի, զինանշանի և օրհներգի՝ որպես Պետության սիմվոլներ, նկատմամբ ակնածանքի և հարգանքի զգացողություն: | Ուստարվա ընթացքում | ԴԱԿ, Դասղեկներ |
| 21. | Մասնակցել ծնողազուրկ և օգնության կարիք ունեցող երեխաների դաստիարակության և ուսուցման գործընթացին, ինչպես նաև նրանց | Ուստարվա ընթացքում | ԴԱԿ, Դասղեկներ |

| | | | |
|---|---|---|---|
| | օգնություն ցուցաբերելու աշխատանքներին: | | |
| 22. | Հետևել դպրոցի հերթապահության և սանիտարահիգենիկ կանոների պահպանմանը: | Ողջ ուստարվա ընթացքում | ԴԱԿ, Դասղեկներ |
| 23. | Արձագանքել և ընթացք տալ աշակերտների անհատական կամ կոլեկտիվ լավագույն առաջարկություններին և դիմումներին: | Ողջ ուստարվա ընթացքում | ԴԱԿ, Դասղեկներ |
| 24. | Աջակցել դպրոցի կառավարման խորհրդի, մանկխորհրդի կողմից աշակերտներին անմիջականորեն վերաբերող այլ աշխատանքների իրականացմանը: | Ողջ ուստարվա ընթացքում | ԴԱԿ |
| 25. | Ամիսը մեկ անգամ անցկացնել աշխորհրդի նիստ: | Ողջ ուստարվա ընթացքում | ԴԱԿ |
| 26. | Մասնակցել դպրոցի ամենօրյա արտաքին և ներքին հարդարման աշխատանքներին՝ ներգրավելով ԾԽ-ին: | Ողջ ուստարվա ընթացքում | ԴԱԿ, Դասղեկներ, ԾԽ |
| 27. | Կազմակերպել միջոցառումներ նվիրված Մայրենիի օրվան՝ Հայ գրերի ստեղծումը թեմայով: | Փետրվար | ԴԱԿ, Դասղեկներ, ԱԽ, Հայոց լեզվի և գրականության ուսուցիչներ |
| 28. | Կազմակերպել զրույց Մարդը և բնությունը թեմայով: | Մարտ | ԴԱԿ, Դասղեկներ |
| 29. | Կազմակերպել մայրության և գեղեցկության տոներին նվիրված միջոցառումներ: | Մարտ-Ապրիլ | ԴԱԿ, Դասղեկներ, ԱԽ |
| 30. | Հայոց ցեղասպանության 109-րդ տարելիցին նվիրված միջոցառումներ՝<br>1) կազմակերպել Աղոթք-պատարագ,<br>2) այցելություն Մեծ Եղեռնի զոհերի հուշահամալիր և Ցեղասպանության թանգարան: | Ապրիլ | ԴԱԿ, Դասղեկներ, ԱԽ |
| 31. | Երեխաներին ծանոթացնել ազգային հերոսների կենսագրությանը: | Ողջ ուստարվա ընթացքում | ԴԱԿ, Դասղեկներ |
| 32. | Կազմակերպել զեկույց նվիրված Մայիսյան հաղթանակներին: | Մայիս | ԴԱԿ, Զինղեկ, Դասղեկներ, ԱԽ |
| 33. | Կազմակերպել այցելություն ՀՀ ՊՆ զորամաս և հանդիպումներ բանակի սպաների, զինծառայողների, Արցախի ինքնապաշտպանական մարտերի մասնակիցների հետ: | Ողջ ուստարվա ընթացքում | ԴԱԿ,Զինղեկ, Դասղեկներ |
| 34. | Անցկացնել զրույցներ Հայ Մեծերի մասին: | Ողջ ուստարվա ընթացքում | ԴԱԿ, Դասղեկներ, Ողջ ուսուցիչներ |